ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Տիգրան Նազարեան

Rédacteur en chef et Directeur
Tigran Nazarian

ԹԻՖԼԻՍ № 3 ՄԱՐՏ ՀՀ—1909 Tiflis

ԸՆԾՐՀԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

XL

ԶՈՏԻԿ

Տարիներ առաջ Գալիցինը մասի վաթսթանեակից մէկն էլ այն չհնելով, որ Տարագը ժամանակակից եկեղեցին քրիստոնէութեան հետ ոչ մի կապ չունենալն էր արձանագրել,—ժամանակաւորապէս դադարեցրեց և իսպառ պիտի ոչնչացնէր Տարագի հետ և Աղբիւրը, եթէ մենք վհատէինք ու մեր բողոքը անձամբ չըտանէինք Պետերբուրգ։

Մեր այդ բողոքը կարդաց հանգուցեալ Եղեան, որի տանն էին այդ ժամին և բժշկապետ Վարդանեան, Ադասարեան։ Եղեանը շատ ջանաց, որ մենք մեղմացնենք մեր բողոքի ոճն ու առաջարկը։ Բայց մենք մի կէտ անգամ չըփոխեցինք, որովհետև ոչ միայն մեղք, յանցանք չունէր Տարագը, այլ ընդհակառակը՝ մենք միշտ անկեղծօրէն ոգևորւում էինք մեր ազգի մեծութեան և բարգաւաճման նախանձախնդիր էինք եղած և հայութեան բարգաւաճումը սերտ կապած համարել ընդհանուր-Ռուսիայի հետ։

Տասնեակ տարիներով քար ու երկաթ է մաղել մեր գլխին տեղական իշխանութիւնը և շատ յաճախ խրոխտացել մեզ՝ «քանիոր մենք մեր թերթերը հրատարակում ենք ռուսական սահմաններից ոչ դուրս...» ևայլն։

Սակայն մենք միշտ էլ գիմադրել ենք և այն համոզմունքին եղել, որ ռուսական սահմաններում էլ հէնց պէտք է գործել և անպատճառ ռանների հետ ձեռք-ձեռքի տուած, այն ռանների, որոնք մեզ պէս համոզուած էին, թէ Ռուսիայի բարգաւաճումն ու մեծութիւնը հպատակ բոլոր ազգերի համահաւասար իրաւունք ու պարտականութիւն ունենալու մէջն է։

Անգլիան հզօր է, անընկճելի և բարգաւաճ, որովհետև նա բրիտանական հպատակներին տալիս է ազգային անկախութիւն։

Ռուսիան կովկասցիներիս ազգային գիտակցութիւնը՝ դպրոցը, եկեղեցին ճնշելով, վարգացրեց մի ուրիշ վաղաժամ վարդապետութիւն՝ սօցիալիզմը։

Բանն այնտեղ հասաւ, որ մեր նորաբողբոջ թերթերից մէկը մի չև անգամ պախարակեց և հայրենասիրու-

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ.
Վեհափառ Կաթուղիկոս ամենայն Հայոց

թիւնը, ասելով, որ իբր թէ Բէբէյն էլ է հայրենասիրութիւնը պարսաւում։

Սրանից դէնն էլ ճանապարհ չըկար անցնելու։

Եւ այսպէս եկեղեցին, ազգը, հայրենասիրութիւնը ուրացած, գաղափարները ոտնակոխ, ճշմարտութիւնը ապաւաշած, բռնի ոյժով, բօյկոտներով նորագոյն վարդապետութիւնը տարածւում էր։

Հայկական երկու պատկառելի կազմակերպութիւններ՝ Հնչակեան և Դաշնակցական, մէկը միւսի հետևից չըյապաղեցին իրանց էլ յայտարարել սօցիալիստներ և տարւելով ժամանակից, կարծէք թէ մոռացան իրանց հիմնական նպատակը՝ հայութեան, հարստահարւած արիւնաներկ հայրենիքին սփոփանք լինելը։

Եւ մինչևոր հայրենիքին մխիթար լինելն էր սկզբունք, բնական է համայն հայութիւնը, որոշ չափով այս ու այն գործելակերպի հետ նոյն իսկ հակառակ լինելով հանդերձ, անկարող պիտի լինէր զսպել իր սիրտը և չըհամակրէր այդ կազմակերպութիւններին։

Բայց երբ սուրբ գաղափարը սքօղւեց այլ վարդապետութիւններով ու շահախնդիր, իրանց ետն ու գրպանը հայրենիքի շահերից վեր գասողները մտան դրօշակի տակ, ահա այդ ժամանակ և երևան եկան ընդհարումներ, տարաձայնութիւններ։

Այժմ մութ մարդիկ կատարում են սխրագործութիւններ հայկական կազմակերպութեան անուան տակ և նահմայնում են թէ հայութեան պատիւը և թէ պատճառ լինում շատ անմեղների բանտերում նստելու, չըղթաններով պճնւելու։

Հայ ազգն այսօր գտնւում է բարոյական անդաստանը հերկելու։

զգացումների սոսկալի անկման մէջ։ Հայութեան ազգընտիր Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Կաթողիկոսին է մնում միայն լքեալ հօտին բերելու խաղաղութեան և սիրոյ զաւիկը։ Եւ այդ զաւիկը թող պայծառ գարնան արշալոյս լինի հայութիւնը սթափեցնելու, խոպան նայած բարոյական հայ

ՍԵՒՈՎ ԵՆՔ ՔԱՐՈՒՄ
(Հայ գիւղացու մտմտուքներից)

Դաշտը դադրում ենք, մաղրուն վեր նստում՝
Այ ձեզ աշխատանք,
Ուրիշների պէս՝ չենք կեղծում, ստում,
Էլի չունենք կեանք։
Մեր օրը սեւ է, հացներս հատամ,
Ջուրներս լեղի,
Ասա՛ ինձ, ախպէ՛ր, էս ապրո՞ւատ դառաւ,
Ապրո՞ւատ գեղ տեղի՞։

Մենք տարին քոլոր՝ ընկած սար ու ձոր
Քրտինք ենք թափում,
Քրտինք ենք թափում, էլի օրէցօր
Սեւով ենք ապրում։
Նարա՛ք, ո՞վ է մեզ էսպէս անիծել,
Մեր բախտը կապել,
Որ էս սեւասիրտ, չար կապանքից էլ
Չենք կարում թափւել։

Անծրեւն ու արեւ, կարկուտն էլ շուտ-շուտ
Մեզ են ծեռք առել,
Դող ու աւազակ, վաշխառուն անկուշտ
Թշնամի դառել.
Ախպէ՛ր, ո՞ւմ դիմենք, օգնութեան յուսով՝
Մի խօսք ասա՛ մեզ,
Դարդամահ ըլած, ընկած անտակ ծով՝
Մնացել ենք էսպէս...

Ցակ. Աղաբաբ

ՈՒԿՐԱԾԻՆԵԱՆ ԳԻՇԵՐ
(Պոգոլից)

Գիտէ՞ք՝ ինչ է ուկրայինեան գիշերը։
Օ՜, դուք չգիտէք՝ ինչ է ուկրայինեան գիշերը։

Ուշադրութեամբ նայեցէք.—երկնքի մէջտեղից մաիկ է տալիս լուսինը. անսահման երկնակամարը լայնացել, աւելի անսահման է դառել. այրւում, շնչում է նա. յարար աշխարհը պատած է արծաթէ շողերով. հրաշալի օդը և՛ զով տօթային է, և՛ լի քաղցրութեամբ, և՛ շարժում է անուշ բուրմունքներով ովկիանոս։ Անշարժ, ներշնչւած, մոայլապատ անտառներն իրանցից արձակեցին ահագին ստւեր։ Հանդարտ ու հանգիստ են այն լճակները. նրանց ջրերի սառնութիւնն ու մոայլ խաւարը ամփոփւած են այդիների մոյգ-կանաչ շրջապատի մէջ։ Ամբողջ դաշտավայրը քնած է։ Իսկ վերևում ամեն ինչ շնչում է, ամեն ինչ հիանալի, ամեն ինչ վառեղ։ Իսկ հոգւոյ մէջ ափրում է անսահման հիացմունք ու պայծառ տեսիլների շարաններ են ծնունդ առնում նրա խորքում։ Աստւածայրն գիշեր։ Հմայիչ գիշեր։ Եւ յանկարծ ամեն բան կենդանութիւն առաւ, և՛ անտառները, և՛ լճակները, և՛ տափաստանները։ Զիլ հնչում է ուկրայինեան սոխակի վեհ ձայնը, և կարծես՝ լուսինը ակամայ է դնում նրան երկնքի մէջտեղում... կարծես թէ դիւթւած՝ նիրհում է բարձրում դիւղը։

Աւելի պարզ, աւելի լաւ են փայլում լուսնեակի տակ խրճիթների շարքերը, աւելի շլացուցիչ կերպով են անջատւում խաւարից նրանց ցած պատերը։ Երգերը դադարեցին։ Բարեպաշտ մարդիկ արդէն քնած են։ Տեղ-տեղ միայն լոյս է երևում նեղլիկ պատուհաններից։ Միայն մի քանի խրճիթների շէմքերի առաջ ուշացած ընտանիքներն իրանց ընթրիքն են անում։

Ցարութիւն Թումանեան

ԾՈՎԱՓԻՆ

Կանգնած եմ ժայռին. վարը, ոտքիս տակ
Ծովը կաղմկէ մոլի, անյատակ.
Ալիք ալիքի յետևէն խմբով
Կուգան ժայռերին կըխփւին թափով։

Հեռու կընայեմ—կապտաւուն ջրերը,
Այստեղ ու այնտեղ—վիթխարի քարեր.
Ջրերը կուգան քարերի կըրծքին
Փըրփուր ցայտելով կընդհատւին ուժգին։

Առագաստ մ'ահա, տես, երերալով
Հեռւէն կերևայ ճերմակին տալով,
Կոհակը սակայն կըգոռայ չորսդին
Անդունդ նետելու թշւառ ճամբորդին։

Ալիք ու անդունդ կայ և կեանքի մէջ,
Երազ, մանկութիւն, սէր, վիշտ, փառքի տենչ
Մեր սիրտն ու հոգին միշտ կըփոթորկեն,
Մինչև օր մը գերեզման նետեն։

Աւետ Գալանթարեան

Թիֆլիս. Մ[illegible]եան փողոց՝ Թ. կայարանը տանող ուղին.

ՎԵՐԱԴԱՐՁ

(Մի պատկեր ներկայից)

Երրորդ զանգը խփեցին. երկաթուղու գնացքն առաջ շարժուեց. նրանք գնացին...

Թ. կայարանի ընդարձակ դահլիճները լցնող հասարակութիւնը մի քանի րոպէում ցրուեց։ Ամենքն էլ շտապում էին վերադառնալ քաղաք, իրանց տները. շուտով կէս գիշեր կըղտնար։

Անցել էին արդէն մի քանի րոպէներ։ Երկաթուղին իր զիլ շւոցով գնացել, հեռացել էր. նա վաղուց արդէն թաղնուել էր դիմացի հողաթմբերի յետևում, իսկ մի մարդ դեռ կանգնած անշարժ, կարծես բևեռւած իր տեղի վրայ, աչքը սևեռել էր այն կէտին, որտեղ ծածկուեց գնացքը։ Խորին, թաւձր մթութեան մէջ նա այլևս ոչինչ չէր տեսնում, բացի վառ լապտերների երկար շարքից, որը նոյնպէս վերջանում էր այն կէտում։

Միջահասակ, մի բոլորովին երիտասարդ տղամարդ էր նա, գուցէ մօտ քսան և հինգ տարեկան, համակ կազմւածքով, մտազրաղ, փոքր ինչ գունատ դէմքով, վառուղ աչքերով։

Թիւրքահայ գաղթական Մուրադն էր դա, որն այդ օրը եկել էր կայարան ճանապարհ ձգելու իր հօրը և բարեկամներին դէպի հայրենիք...

Նրանք վերադառնում էին «երկիր»։

* * *

1894 –96 արհաւրալից տարիներում ծննդավայրն իր երկունքի ցաւագար րոպէներում դուրս էր ժայթքել նրանց իր սիրող գրկից և նրանք արտասւաթոր ու արիւնլայ ցրւել էին երկրագնդի բոլոր անկիւններում։ Կեանքի դժնդակ պայմաններն անհնարին էին դարձրել նրանց ապրել այն երկրում, որն իր նախկին չքնաղ, դրախտանմման դրութիւնից փոխւել էր մի դժոխքի, ուր ամեն կողմ երևում էր միայն աւերակ, մոխիր, դիակ... Այդքան սարսափելի էր դարձել այդ ժամանակ այն երկիրը, որն այնպէս սիրելի էր նրանց սըրտին... Մի անգամ խաւարել էր այդ թշւառ երկրի պայծառ հորիզոնը և թւում էր թէ այլևս նա չէ պարզւելու... Եւ մարդիկ այն ժամանակ զարհուրած փախել էին նրանից։

Անդրկովկասն էր այն երկիրը, որն առաջին անգամ պատսպարեց Տաճկահայաստանից փախած գաղթականներին։ Հայ ժողովուրդը գրկաբաց ընդունեց իր եղբայրներին ու քոյրերին, որոնք մերկ ու քաղցած, երկար օրեր ճանապարհի ցուրտն ու նեղութիւնները տանելով, նրա մօտ էին փախել, նրան ապաւինել։

Ամբողջ Անդրկովկասի հայաբնակ քաղաքներն ու գիւղերը մի-մի ապաստարան դարձան նրանց համար, հոգալով նրանց կարիքները, մահւան ճանկերից փրկելով անողոք բռնութեան այդ թշւառ զոհերին։ Եւ նրանք ցրւելով մեր երկրի բոլոր անկիւններում, շուտով մի կերպ տեղաւորւեցին, սկսեցին մշակութիւն, արհեստներ, գործառնութիւն։ Շատերը նրանցից այս 12—14 տարւայ ընթացքում նոյնիսկ բաւականին բարեկարգեցին իրանց նիւթական դրութիւնը։

Սակայն մի ամենագլխաւոր բան նրանց անհնարին եղաւ ձեռք բերել և դա հողն էր։

Իր հայրենիքում ընդարձակ բերրի հողեր ունեցող տաճկահայ գիւղացին այս նոր գաղթավայրում պիտի ապրէր կտրւած հողից, սրա-նրա դռներին... Տեղական հայ ժողովուրդն լինքը նոյնիսկ տանջւում էր սակաւահողութիւնից, էլ ինչ կարող էր նա տալ նրանց։ Եւ մեր երկրում նրանք մնում էին իրրև մի որբ զաւակ, արմատից կտրւած մի բոյս, պիւղերում քարշ տալով մի խեղճ գոյութիւն, իսկ ծագկած մարդաշատ քաղաքներում նրանց առաջ շարունակ բաց էին միայն մուխ

խորշերն իրանց զազրելի տղմով անբարոյականութեամբ...

Եւ գաղթականների ամենաջերմ փափագն էր մի օր վերադառնալ իրանց սիրուն վայրերը, ինչպէս երբեմն հրէաները ձգտում էին դառնալ աւետեաց երկիրը։

Իսկ այժմ ահա երկար տարիների նրանց փափագած ցնորքն իրականութիւն էր դառնում։ Այլևս վերջացել էր նրանց թափառական կեանքը, գոյքի և պատսպարման հոգսերն էլ չէին տանջում նրանց։ Ամենքն էլ ուրախ էին, ամենքն էլ ժպտում էին։ Ամենքն էլ ուրախ էին, որ վերջացել էր նրանց թափառական կեանքը, գոյքի և պատսպարման հոգսերն էլ չէին տանջում նրանց։ Ամենքն էլ ուրախ էին, ամենքն էլ ժպտում էին։

Սիմոն վարպետը տեղափոխում է Ազգային տաղաւորի հին-նախիջեւանի շրջակայքում

բացել էր սահմանի արգելքը։ բացւել էին հայրենիքի փակւած դռները և նրանց մնում էր այժմ միայն շտապել, օր առաջ օգտւել այդ յարմար դրութիւնից, գնալ նորից տիրանալ իրանց թողած հողերին, կայքին...

Սակայն ինչ էր պատահել արդեօք։

Յիրաւի—մի մեծ և անսպասելի դէպք. դուցէ մի հրաշք, որի մասին դրանից դեռ մի քանի ամիս առաջ ոչոք չէր երազում... Միանգամից իրրև կախարդական պատառանի մի հարւածով վերացել էր այնտեղից բռնութիւնը, անօրէնութիւնը և կարծես արդէն յանկարծ սկսել էր բոլորովին այնտեղից արիւնաբղուխ թշնամին և բարեկարգել էր վայրագութիւնների բեմ դարձած այդ աշխարհը։ Թւում էր թէ արդէն հաստատւել է այնտեղ վերջապէս կեանքի, գոյքի և պատսպարման հովութիւն... Այո, խորտակւել էր անդարձ հայ տարագրի վերջին խաչը, որ ամենից ծանր էր ծռում նրա ուսերը։ Ամենից ծանր էր ծռում նրա ուսերը։

Թիւրքիայի սահմանադրութիւնն էր դա, որ եկել էր մի հարուածով փշրելու այդ բոլոր գորդեան հանգոյցները։

Եւ ահա ուժգին թնդացին հայրենազուրկ տաճկահայ գաղթականների սրտերը, երբ նրանք լսեցին հայրենիք վերադառնալու թոյլտուութիւնը և ամենքն էլ անմիջապէս պատրաստուեցին չէել նորից դէպի իրանց աւետեաց երկիրը։

Օտարութեան մէջ նրանք աւելի խիստ էին զգացել հայրենիքի քաղցրութիւնը, կարօտը, հմայքը. ամեն ինչ այժմ հայրենիքում հրապուրիչ էր նրանց համար։ Նրանք այլևս չէն համարւելու իրաւազուրկ, գերաւոր, չեն հալածւելու. նրանք իրանք պիտի տնօրինեն իրանց ներքին կեանքը։ Նոյնիսկ իրանց այլազգի հարևանները, որոնք դեռ մի քանի ամիս առաջ, թէև իրանք էլ իրաւազուրկ, արհամարհանքով էին վերաբերւում դէպի հայ տարրը և պատրաստ էին տիրող բռնակալութեան ձեռքում հլու գործիք դառնալու հայութիւնը հալածելու և ջնջելու համար, այսօր ուշքի եկած՝ եղբայրութեան ձեռք են մեկնում այդ մարտիրոս ժողովրդին, որն իր 300,000 զոհերով գնեց ոչ միայն իր, այլև ամենքի ազատութիւնը... Որը Թիւրքիայի ազատագրութեան առաջամարտիկ դրօշակակիրը եղաւ...

Այժմ ամենքը ժպտում էին նրանց և՛ բաղդը, և՛ հարևանները և՛ հայրենիքը, որն իր սիրոյ գերբնական ուժով կրկին ձգում էր նրանց դէպի իր գիրկը։ Եւ գնում էին նրանք որն ինչպէս կարող էր—հատ հատ կամ խմբերով. գնում էին համբուրելու իրանց կարօտած սիրելիների հետ. գնում էին որոնելու կորած թանկագին գերեզմանները. գնում էին վերականգնելու աւերակ ու մոխրածածկ գիւղերը. գնում էին իրանց քրտինքով մշակելու անտէր ու խոպան մնացած սև-հողերը...

Գաղթականների մի սուսար խումբ էլ այդ օրը Թ. կայարանից երկաթուղով գնում էր դէպի Կարս, այնտեղից սահմանն անցնելու։

Դրանց էր ճանապարհ ձգում Մուրադը։

* * *

Գնացողների մէջ էր և ծերունի Սաքօն—Մուրադի հայրը—որն ուրախ-ուրախ գնում էր իր կեանքի վերջին օրերը սիրած ծննդավայրում անցկացնելու, իր դողդոջ բազուկներով նորից հերկելու մայր հողը, ապ-

Քիւրդ հովիւներ Հայաստանում

րելու իր սեպհական երկրում իրրև ազատ, ինքնուրոյն մարդ և այնտեղ էլ թաղւելու իր պապական գերեզմանատանը։ Սկսած այն օրից, երբ հրապարակ էր եկել գաղթականների վերադարձի խնդիրը, Մուրադի և իր հօր մէջ վէճը չէր վերջանում։ Որդին ամեն ջանք գործ էր դնում համոզելու իր հօրը—չգնալ նորից այն երկիրը, ուր նրանք այլևս ոչինչ չունէին։ Ջէ՞ որ իր մեծ եղբօրն ապահով էին քրդերը իրանց գիւղը թալանելու

ժամանակ, քոյրն անյայտացել էր Աստուած գիտէ թէ ո՛ւր, գուցէ բէկի հարեմն էր ընկել կամ կիրճերում նահատակուել ու գիշակերների կերակուր դարձել, իսկ դրանց ցաւից մեռած մօրը նրանք թաղել էին հէնց այն ժամանակ իրանց փախչելուց մի օր առաջ։ Չէ՞ որ ամբողջ ընտանիքից մնացել էին միայն իրանք երկուսը—հայր և որդի. էլ ինչո՞ւ գնալ այնտեղ, ո՞ւմ համար... Թող գնան ուրիշները, որոնք այնտեղ թաղել են ընտանիք, կայք, տուն ու տեղ. որոնց համար բաղդը այստեղ չէ ժպտում։ Իսկ Մուրադի և իր հօր համար ձեռնտու է թէկուզ մի շաբաթ մնալ Թ. քաղաքում, որտեղ այժմ նրանք վատ չեն ապրում։ Մուրադը շահաւէտ ծառայութիւն է գտել, նրանք այլևս ապրուստի նեղութիւն չեն քաշում։ Իսկ ի՞նչ բաղդ կարող էին գտնել նրանք այն հայրենիքում, ուր ամենինչ վաղուց հիմնայատակ էր եղած։ Վերադառնալ նորից այն երկիրը, դա միևնոյն չէ՞ թէ նորից դատապարտել իրանց ծանր ու անվերջ նեղութեան, տանջանքի, գուցէ և վտանգի... Ո՞վ գիտէ ինչ վիճակ էր սպասում Թիւրքիայի մանուկ սահմանադրութեան. չէ՞ որ ամեն ինչ կարող էր նորից փոխուել... Ո՛չ, աւելի լաւ էր նրանց մնալ այս նոր հայրենիքում, ուր պայմանները նրանք բաւականին ընտելացել էին։

Ահա այդպէս էր դատում Մուրադը։

Իսկ հայրը, այն յամառ ծերունին, ոչ մի կերպ չէր համոզուում. հիւրընկալ նոր հայրենիքը շատ խորթ ու սառն էր նրա սրտին. զարիր մթնոլորտը խեղդում էր նրան. նա անսասան կերպով հաւատում էր իր հարազատ երկրի և ժողովրդի մօտիկ բաղդաւոր ապագային և փափագում էր օր առաջ թողնել այդ օտարական, կիսամուրացիկ կեանքը.

—«Այնտե՛ղ եմ ծնուել, այնտեղ էլ պէտք է ապրեմ ու աշխատեմ և այնտեղ էլ մեռնեմ ու թաղուեմ իմ սիրելիների մօտ, իմ քաղցր վաթանում. ես տեսնում եմ նրա արևն արդէն ծագում է. թէկուզ սև ամպեր նորից կուտակուեն նրա հորիզոնում, սակայն այլևս չեն կարող ծածկել նրան, և եթէ մեղ նորից վիճակուէը կըրուել, դրա համար էլ հարկաւոր է անպատճառ գնալ...» —այդպէս էր պատասխանում նա միշտ իր որդուն և նրա վճիռն անդառնալի էր։

Սակայն կար և մի ուրիշ թագուն, գուցէ և ամենագլխաւոր, պատճառ, որ գամել էր Մուրադին այս նոր երկրի վրայ։ Նա այնքան էր սիրում իր ծերունի հօրը, որ նրա համար անշուշտ կըզոհէր և՛ ծառայութիւն իր լաւ եկամուտով և՛ ապահով հանգիստ դրութիւն ու կըհետևէր նրան դէպի մայր երկիր, եթէ երկաթից էլ աւելի ամուր շղթաներ չըկապէին նրան Թ. քաղաքի հետ։

Նրան գերողը գեղեցիկ կատօն էր, իր հմայիչ, կաշկանդող սիրով։

* * *

Գ-եանների առևտրական տանը, որտեղ ծառայում էր Մուրադը, պաշտօն էր վարում և չքնաղ կատօն, այդ որը աղջիկը։ Գեղեցիկ էր նա և հրապուրիչ։

Շնորհիւ միատեղ պաշտօնավարութեան, նրանք շարունակ շփուում էին միմեանց հետ և հասուն երիտասարդների անարատ սրտերում սկսում էր հետզհետէ աւելի ու աւելի բորբոքուել սիրոյ սրբազան կայծը։ Նրանք շուտով հասկացան միմեանց, մտերմացան, սիրեցին և յաւիտեան միմեանց հետ կապուելու ուխտ արին։ Արդէն երկու տարի էր, որ նրանք ապրել էին միմեանց այդքան մօտ, սիրոյ հմայքներով արբեցած, ապագայի վարդապոյն ցնորքներն օրօրելով իրանց վառուող երևակայութեան մէջ, և ահա այն ժամանակ, երբ արդէն հեռու չէր նրանց փայփայած յոյսերի իրագործումը, անողոք անակնկալը գալիս էր խորտակելու անքուն գիշերների անդուլ աշխատանքով նրանց կառուցած չքնաղ շէնքը. գալիս էր ջախջախելու նրանց ապագան, բաղդը...

Գաղթականների վերադարձի խնդիրն անելք դրութեան մէջ էր դրել սիրահարներին։ Նրանց մնում էր ընդմիշտ բաժանուել։ Ծանր խնդրի առաջ էր կանգնած Մուրադը։

Ծերուկ հայրը կամակոր կերպով վճռել էր անպատճառ դընալ հայրենիք և թախանձանքով ու արտասուելով խրատում էր որդուն միանալ իր հետ. իսկ սիրուհին, որը զարհուրում էր այն երկրից, գործ էր դնում իր ամբողջ հմայքն ու սէրը յետ պահելու նրան։ Որքա՜ն լսեր Մուրադը. մի կողմ կանգնած էր հայրը, միւս կողմ սիրուհին. որդիական սէրը մրցում էր ամուսնական սիրոյ հետ և նրանցից ոչ մէկը չէր ուզում զիջել միւսին. իսկ դրանց մէջ տեղ տատանւում ու տանջւում էր խեղճ Մուրադը, մինչև որ, վերջապէս, գեղեցկուհու հմայքն ու սէրը տարան իրանց յաղթանակը։

Վարագայ Հայրիկեան վանքը. Վարժարանի յիսնամեակի առիթով

Նա վճռեց դաւաճանել իր հօրը և մնալ սիրուհու մօտ։ Դրա համար նա համոզեց ծերունուն գնալ գաղթականների խմբի հետ մինչև սահմանագլուխ, ուր նրանք պէտք է մի քանի օր սպասէին մինչև ուրիշների ժողովուելը. իսկ ինքը այդ ժամանակ իբր թէ պէտք է վերջացնէր Թ. քաղաքում իր գործերը և շտապէր հասնել նրանց...

Նա յոյս ունէր այդպիսով ազատուել ծերուկից, իսկ յետոյ... մոռանալ նրան...

Եւ ահա այդ գիշեր նա ճանապարհ ձգեց իր հօրը, որին նա գուցէ այլևս չէր տեսնելու...

* * *

Գատարկուած կայարանի լուռթիւնն սթափեցրեց նրան և նա Միքայէլեան փողոցն իջաւ տուն գնալու։

Գնում էր նա դանդաղ քայլերով, գլխիկոր, խոր մտածմունքի մէջ ընկղմած։ Գեռ կարծես նրա աչքի առաջ էր երրորդ կարգի վագոնը, ուր տեղաւորւած էին գնացող գաղթականները։ Օ՜, ինչպէս այդ դիշեր ուրախ փայլում էին նրանց դէմքերը, ինչպէս ուրախ շատախօսում էին նրանք, երգում, ամենք մինչև իսկ ուրախութիւնից արտասւում... Մուրադի մտքում անջնջելի դրոշմւել էին մի քանի խօսքեր նրանց երգերից և նա ինքն իրան այժմ կամաց կրկնում էր.

«Վաթան, իմ վաթան,
«Արեւիդ ղուրբան.
«Ո՞ր ծոցդ կուգամ,
«Իմ սիրո՜ւն վաթան»։

Այժմ էր նա հասկանում, թէ այն ինչ անդիմադրելի ոյժ էր, որ ձգում էր տարագիր հայ գաղթականներին նորից դէպի մայր-երկիր։ Հայրենիքի սէրն իր վիթխարի հասակով արձանացած էր նրա մէջ և այժմ թմրած երեւակայութեան առաջ և կարծես յանդիմանում էր նրան, որ նա դաւաճանեց իրան...

Գնացողների ջերմ համբոյրները կարծես Մուրադի շրթունքների վրայ էին դեռ և այրում էին նրանց. ճ, մի՞թէ Յուդայի համբոյր էր տալիս նա նրանց, իր ծերունի հօրը...

Այդ ամենը մի հիմնական յեղաշրջում էին առաջ բերել նրա մտքի մէջ։ Նա այժմ էր զգում իր արարքի ամբողջ սոսկութիւնը. նա ամաչում էր և զզւում ինքն իրանից... Ամենքը գնում էին, ամենքը... մինչև իսկ երեխաները, կանայք, ծերունիները... Իսկ ինչո՞ւ պիտի մնար ինքը. ինչո՞ւ ինքը միայն պիտի լինէր ամենից վատը... Էլ ինչո՞ւ էր նա աշխարհ եկել. մի՞թէ միայն իր համար ապրելու. միայն իր վրայ մտածելու...

Նա այժմ անիծում էր այն րոպէն, երբ պատահեց չքնաղ Կատոյին։ Ջլւինէր այդ կաշկանդող, դժբաղդ սէրը և նա այժմ անդուշտ յետ չէր մնալ գնացողներից, իր պարտքը կատարելուց։ Նրա սրտում այժմ կազմւել էր մի ցուրտ դատարկութիւն, որին լցնել ու ջերմացնել չէն կարող թէկուզ նոյնիսկ սիրած կնոջ գգւանքները։

Վերջապէս նա տուն հասաւ։ Բացեց դուռը և ներս մտաւ։ Սենեակի մթութիւնն ու դատարկութիւնը այժմ սարսռեցրեց նրան. կարծես դա մի մեռելատուն էր, ուր դրւած էր իր հօր դագաղը... Նա սովորել էր ամեն երեկոյ տուն գալիս տեսնել ճրագը վառ, ծերուկ հայրն իրան սպասելիս։ Նրանք միասին ընթրում էին և երկար երկար զրուցում օրւայ անցած դարձածի մասին։ Ծերունի հօր փորձառու խրատները որքա՜ն անգամ օգնութեան էին հասել նրան նեղութեան րոպէին. որքա՜ն փարատել էին նրա վիշտը, մխիթարել, յուսադրել նրան...

Իսկ այժմ չէլար այդ հայրը։

Մուրադը մի խոր հոգոց քաշեց. նրա աչքերը թրջւեցին և նա չուզեց մինչև իսկ վառել ճրագը, որ չըտեսնէր սենեակի դատարկութիւնը, ուր ամեն մի իրը, ամեն մի անկիւնը յիշեցնում էր ծերուկ հօրը... Ո՜հ, որքա՜ն ծանր է ապրել որը, միայնակ, առանց ծնողական գգւանքի։ Տխուր մտքերը մի անգամ էլ խառնւեցին նրա յուզւած ուղեղում և նա շորերով պառկեց մահճակալի վրայ, մութ սենեակում։

Երկար նա շուռ էր գալիս մէկ կողքից միւսը և չէր կարողանում փակել աչքերը. քունը հեռու էր փախչում նրանից։ Նա նորից փղձկաց ուժգին, արտասուքները յորդ թափւեցին նրա աչքերից և նա երկար, շա՜տ երկար հեկեկում էր միայնակ, անմխիթար...

Փիլիքական ու բարոյական յոգնածութիւնը վերջապէս յաղթող հանդիսացան և նա կիսաքուն դրութեան մէջ ընկաւ։

* * *

Եւ ահա նա գտնւում է դարձեալ այն երկրում, որտեղից իր պատանեկական հասակում նա այնպէս սարսափած փախչում էր իր հօր հետ միասին։ Սակայն այժմ բոլորովին այլ պատկեր էր կրում այդ աշխարհը։

Նախկին բռնակալութեան հետքն անգամ չէր երեւում։ Այնտեղ այժմ թագաւորում էին ազատութիւնը, արդարութիւնը, եղբայրութիւնը և հաւասարութիւնը։ Սահմանադրութեան այդ բարիքներն ամենալայն չափով իրականացել էին այնտեղ. այլևս չէլար տիրող և հպատակ, չէլար կեղեքող և տանջւող. ամենքն էլ ազատ հաւասար քաղաքացիներ էին համարւում ընդհանուր հայրենիքի. ամենքն էլ միակերպ հաւասար պարտք և իրաւունք ունէին դէպի ընդհանուրը. ամենքն էլ ազատ տնօրինում էին իրանց քաղաքական ներքին կեանքը, բարգաւաճում իրանց տնտեսական ու մտաւոր դրութիւնը, զարգացնում իրանց ազգային լեզուն, գրականութիւնը, կուլտուրան։ Ամենալայն չափով իրականացել էր այդ երկրում ապրող տարբեր ազգութիւնների եղբայրութեան գաղափարը։

Երկիրն առատօրէն վարձատրում էր երկրագործի խաղաղ, հալալ աշխատանքը. արհեստներն ու վաճառականութիւնը ծաղկում էին. ուսումն ու գիտութիւնը լայն ծաւալ էին ստանում և պարտադիր ամենքի սեպհականութիւն դառնում։

Նախկին վայրագ ու աւազակաբարոյ քուրդ ու չերքէզը թողել էին թափառական կեանքը, աւազակութիւնը, թալանն ու սպանութիւնը. նրանք վարժւել էին նստակեաց կեանքի, երկրագործութեան, դիւղատնտեսութեան ու արհեստների և այժմ աւելի բազդաւոր ու լաւ էին ապրում։

Երկրի բոլոր անկիւնները հայի աշխատասէր ձեռքերի շնորհաբեր դրոշմն էին կրում։

Նա շրջում էր այդ ամբողջ աշխարհը և ամեն տեղ էլ նոյն բարեկարգ դրութիւնը տեսնում։ Կարգ, օրէնք, արդարութիւն թագաւորում էին ամեն տեղ։ Գիւղերը մեկը միւսից աւելի շէն ու բարեկարգ էին. քաղաքները մեկը միւսից աւելի գեղեցիկ ու հոյակապ։ Ժողովուրդը բաղդաւոր էր. մարդիկ գոհ էին իրանց վիճակից։

Այդպէս այժմ վերակենդանացել էր այդ չքնաղ աշխարհը, որը երբեմն այնպէս հևում էր մահւան տագնապի մէջ... Աւերակներից մի քանիսը պահւում էին ինչպէս թանկագին հնութիւններ, ինչպէս կենդանի վկաներ այն դժբաղդ օրերի, որոնց տոկալ կարողացաւ այդ ժողովուրդը։

—Սակայն ի՞նչպէս կատարւեցին այս բոլոր հիմնովին փոփոխութիւնները, մի՞թէ կախարդական գաւազանի մի շարժումով,—հարցրեց Մուրադը առաջին պատահած մարդից։

—Չէ՞ որ մի ժամանակ մենք այնպէս սարսափած փախչում էինք այս երկրից և այս բոլոր մարդիկ մեզ հետ միասին գաղթեցին։

—Ո՜չ,—պատասխանեց նա,—շատ քրտինք թափւեց, մեծամեծ զոհաբերութիւններ արւեցին, մինչև կատարւեցին այս ամենը և ահա տոկուն, անդուլ աշխատանքը վերջապէս տարաւ իր յաղթանակը։ Այն ժամանակ, երբ շատերը գաղթեցին ձեզ հետ միասին, երբ հայրենիքը տագնապի մէջ էր, աւելի շատերն էլ փաթաք նրանց, մնացին ամուր կպած իրանց մայր հո-

զին և իրաւունքի ու արդարութեան կռիւը նրանք տո-
կունութեամբ մինչև վերջը տարան... Հայրենիքից զաղ-
թողներն էլ ցրուելով մինչև աշխարհի հեռաւոր ծայրե-
րը, պանդխտութեան մէջ էլ չկտրուեցին իրանց մայր
հայրենիքից, չխորթացան նրանից, չմոռացան նրա
վիշտը, և հէնց որ ծագեց աղատութեան արշալոյսը,
հէնց որ հրատարակուեց Թիւրքիայի սահմանադրութիւ-
նը, իսկոյն զողին գաղթավայրերը և շտապեցին մայր
երկիր իրանց պարտքը կատարելու... Հայրենիքի բա-
րօրութեան սուրբ գործին նրանք զոհ բերին ամէն ինչ...
Եւ ահա այսպէս հայ ժողովուրդը զարձեալ խտանալով
իր հարազատ երկրում, եռանդով առաջ տարաւ հայ-
րենիքի վերաշինութեան սուրբ գործը, մինչև որ նա
վերջապէս այսպիսի յաջողութեամբ պսակուեց: Ճիշտ է,
եղան և մի քանի անտարբերներ, որոնք օտարութեան
մէջ հրապուրուելով անձնական վայելքներից մոռացան
իրանց պարտքը դէպի հայրենիքը, և պատմութիւնը նա-
խատինքով դրոշմեց նրանց անունները...

Վերջին խօսքերը խայթեցին Մուրադի սիրտը. զրանք նրան էլ էին վերաբերում. չէ՞ որ ինքն էլ այդ վատերից մէկն էր եղել...

Իսկ շուրջը եռում էր կեանքը, աշխատանքը: Մարդիկ ժրաջան մրջիւնների պէս այս ու այն կողմն էին շտապում. ոչոք անգործ չէր թափառում. ոչոք չէր մուրում և ոչոք չէր հալածւում ու տանջւում...
Սակայն Մուրադը մի մոռացած անկիւն էր որոնում այդ ամբողջ երջանիկ աշխարհում: Նա ուզում էր տես-
նել թէ ինչ դրութեան մէջ է իրանց Ա. գիւղը, որին նա երբեմն զողել էր կրակի և մոխրի մէջ:

Եւ ահա նա երկաթուղու մէջ է:

Ծանօթ լեռների կուրծքը պատռելով, գնացքն իջնում է այն հովիտը, ուր երբեմն գտնւում էր Ա. գիւղը: Իսկ այժմ այնտեղ նրան երևում է մի ամբողջ գեղեցիկ քաղաք, որը չընայած իր հսկայական փոփո-
խութեան, հին անունն է կրում: Չէին փոխել միայն շրջակայ լեռները և հովտի մէջ տեղից հոսող վճիտ գե-
տակը:

Դնացքը կանգ է առնում: Կայարանում վխտում է խուռն բազմութիւն, որոնց մէջ նա տեսնում է շատ ծանօթ դէմքեր: Դրանք նրա նախկին համագիւղացիք էին, որոնց հետ միասին նրանք գաղթել էին Ա. գիւ-
ղից և որոնց յետոյ նա նորից ճանապարհ էր դրել դէպի հայրենիք: Ամենքը ճանաչում են նրան. նա մո-
տենում է նրանց, ուզում է խօսել նրանց հետ, հարց-
նել իրանց տան ու ընտանիքի մասին. իսկ նրանք ար-
համարհանքով շուռ են տալիս նրանից իրանց երես-
ները:

—«Ուխտադրուժը»—շշնջում են նրանք միմեանց, ցոյց տալով նրա վրայ:

Խորը խոցւում է Մուրադի սիրտը, սակայն նա գտնում է, որ իրաւացի են նրանք: Չէ՞ որ ինքը խա-
բել էր նրանց և չէր վերադարձել հայրենիք այն ժամա-
նակ, երբ ամենքը նորից շտապում էին նրա գիրկը, իրանց քրտինքով ու ջանքերով նրա արցունքը սրբե-
լու, նրա համար այս երջանիկ ապագան պատրաստե-
լու...

Նա իջնում է քաղաք: Մաքուր, լայն փողոցները խաչաձև կտրում են նրան ամեն կողմից: Դեղեցիկ բարձր տները, թաղւած ճոխ բուսականութեան մէջ, նմանում էին մի-մի ամարանոցի: Որքան փոխել ու բարեկարգւել են նրանք: Նախկին ցածրիկ, խոնաւ ու մութ խրճիթների հետքն անգամ չի մնացել. լուսամուտ-
ներից տեղ-տեղ լսւում էին դաշնամուրի մեղմ, դրա-
ւիչ ձայները:

Քաղաքի կենտրոնում երևում է մի բարձր հոյա-
կապ շինութիւն. դա ճեմարանն էր:

Կիրակի էր: Մարդիկ ուրախ-ուրախ գնում էին այնտեղ. կատարւում էր մի մեծ աղգային տօն.

Հայրենիքի քաղաքական վերածնութեան տարե-
դարձը:

Ո՜հ, ինչպէ՜ս թնդում էր Մուրադի ճնշւած սիր-
տը. ինչպէ՜ս կուզէր ինքն էլ այնտեղ լինել: Սակայն նա չըհամարձակւեց նոյնիսկ անցնել այն փողոցով, ուր գտնւում էր ճեմարանը: Նա գնում էր գաղտագողի, վախենալով պատահել ծանօթ մարդկանց: Կարծես նա մի ոճրագործ էր, որը փախչում էր մարդկանց հասա-
րակութիւնից: Նա որոնում էր իրանց տունը:

Ահա վերջապէս նա իրանց բակումն է: Կիսաբաց դռան ճեղքից նա նայում է դէպի ընդարձակ դահլիճը, ուր բացւած սեղանի շուրջը համախմբւել էր իրանց ամբողջ ընտանիքը: Ամենքին էլ ճանաչում է նա. ա-
հա ծերունի հայրը բազմած սեղանի գլխավերևը, նրա կողքին մայրն է, յետոյ եղբայրը, քոյրը, բարեկամնե-
րը. բոլորը, բոլորը ներկայ էին այնտեղ. պակաս էր միայն մէկը, որ գուցէ իրաւունք էլ չունէր նրանց սեղանակից լինելու: Այդ անատակ զաւակն ինքն էր:

Ամենքն էլ ուրախ ճաշում էին, խօսում, ծիծա-
ղում, տալիս էին ծանօթ անուններ. և ահա հայրը տալիս է և նրա անունը և նրա բարի դէմքը մոայլ-
ւում է:

—Ամենքը վերադարձան հայրենիք, միայն նա ա-
մենաանգութ կերպով խարեց ինձ,—ասաց ծերունին և արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորւեցին նրա ճերմակ այտերի վրայով:

Շատ էր մօտեցել Մուրադը դռան շէմքին. լսելով հօր խօսքերը, նա ուզեց ներս ընկնել դահլիճ, փարել նրա ոտքերին և աղերսել—«հայր, հայր ներիր, ես մե-
ղաւոր եմ»—սակայն չըհամարձակւեց: Իսկ քոյրն ար-
դէն նկատել էր նրան և ուրախ վազում էր դէպի նա: Մուրադը փախաւ նրա առաջից և ընկաւ փողոց:

—Մուրա՛դ, Մուրա՛դ...

Մէկը ձայն տւեց նրա յետևից. նա դնցւեց, վեր ցատկեց տեղից. նա զարթեց...

Ամեն ինչ երազ էր. երազ էր և հայրենի երկրի բարեկարգ դրութիւնը...

Լոյսն արդէն բացւել էր. գեղեցիկ կատօն էր նը-
բան գործի կանչում.

—Ես պիտի գնամ երկիր,—ասաց նա իր սիրու-
հուն,—պիտի գնամ, ինչ էլ որ լինի. ես հաւատում եմ, որ նրա համար արդէն բացւում է երջանկութեան ա-
շալոյսը... Մնացիր բարև. մոռացիր ինձ և բաղդաւոր եղիր...

—Ո՛չ, առանց քեզ ես բաղդաւոր լինել չեմ կա-
րող. ես սիրել եմ քեզ բոլոր սրտով և ուխտել եմ քեզ հետ տանել բոլոր զրկանքներն ու ցաւերը. եթէ դու վճռել ես գնալ, ես ևս քեզ հետ եմ գալու...

* * *

Չետևեալ օրը Դ-ետնները յուզւած սրտով ճանա-
պարհ էին դնում Մուրադին և կատօլին, որոնք շտա-
պում էին միանալ հայրենիք վերադարձող գաղթա-
կանների խմբին:

Լ. Մարկոսեան



Սահմանադրական Տաճկահայաստանում նոր երգեր, նոր ծառեր, նոր համախորհուրդներ

ԳՈԳՈԼԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ
(1809—1852)

Ներկայ մարտի 20-ին Ռուսիան տօնեց իր գեղագէտ-գրականագէտ Վ. Ն. Գոգոլի ծննդեան հարիւրամեակը և առաջիկայ ապրիլին էլ Մոսկւայում կայանալու է նրա արձանի հանդիսաւոր բացումը։

Թիֆլիսի բոլոր դպրոցները, թատրոններն ու ակումբներն այդ օրը ուրիշ ցերեկոյթներ և երեկոյթներ նուիրած ռուս երգիծարանի և թատերագրի յիշատակին։



Ն. Վ. ԳՈԳՈԼ

Այդ օրը լոյս տեսաւ և Աղբիւրի մարտի տետրը, որի մէջ տպագրուած է Գոգոլի կենսագրութիւնը և նրա Դինէպր հայրենասիրական բանաստեղծութիւնը, որ հանդիսի ժամանակ Թիֆլ. II իգական գիմնազիայում և առհասր. դպրոցում Աղբիւրից հայերէն կարդացուեց։

Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլը ռուսաց ազգային գրականութեան հիմնադիրներից մէկն է։ Նա իր ուղղութեամբ արևեստագէտ-բարոյախօս է, իսկ արտայայտութեան ձևով՝ հումօրիստ-երգիծաբան։ Իբրև երգիծաբան, նա դուրս է բերում իր գրուածքների մէջ ռուսական կեանքի մութ ու բացասական կողմերը և ծաղրում վշտի ծիծաղով իրականութեան վէրքերն ու այդպիսով կոչում մարդկանց դէպի ուղիղ ճանապարհ։ Գոգոլը ահագին ազդեցութիւն ունեցաւ ռուս գրականութեան զարգացման վրայ։ Նրանից յետոյ ռուս գրականութիւնը վերջնականապէս ստանում է բուն ըէալական բնաւորութիւն։

Գոգոլի առաջին գրական փորձն էր Գանց Կիւխելգարտէն հովերգութիւնը, որ տպագրուեց 1820 թւին։ Բայց այդ գրուածքը անյաջողութեան մատնուեց խիստ քննադատների կողմից։ Սակայն, երբ նա 1831 թւին հրատարակեց իր մալարօսական պատմուածքների ժողովածուն, Պուշկինը մեծ գովասանքով վերաբերուեց դէպի նա։ Եւ այդ ժամանակւանից Գոգոլի հռչակը հետզհետէ սկսեց տարածուել և նա դարձաւ գրականութեան գլխաւոր այժերից մէկը։ Գոգոլի գլխաւոր գրուածքներն են.

1) *Տարաս Բուլբա* վէպը, որի մէջ դուրս է բերուած Զապօրօժցի կազակների նիստուկացը, սովորութիւնները, նրանց կռիւը լեհերի ու թաթարների դէմ հայրենիքի և ուղղափառ հաւատի համար։ Այս վէպի գլխաւոր հերոսն է Տարաս Բուլբան, որ ամբողջ կազակութեան ներկայացուցիչն է ու՝ նրա ոգու արտայայտիչը. սա մի վերին աստիճանի հայրենասէր ասպետ է, որը սպանում է մինչև անգամ իր հարազատ որդուն, իբրև դաւաճանի, իսկ ինքը մեռնում է լեհերի հետ կռիւում։ Այս գրուածքը թարգմանել է հայերէն Մանուկ Աբեղեանն։

2) *Ամուսնութիւն* կոմեդիան, որի մէջ դուրս են բերուած տիպեր ու տեսարաններ վաճառականների կեանքից։ Այս գրուածքը թարգմանել է հայերէն Պետր Պռոշեանն։

3) *Վերաքննիչ* կոմեդիան, որի մէջ Գոգոլը դուրս է բերում գաւառական քաղաքի նիստն ու կացը և մերկացնում է գաւառական չինովնիկների շահատակութիւնները, նրանց կաշառակերութիւնը, կամայականութիւնը և այլն։ Հայերէն թարգմ. ուսանող Տանդուեցեալ Կոմանեան։

4) *Մեռեալ հոգիներ* պօէմը։ Սրա գլխաւոր հերոսն է Չիչիկովը, որը շրջելով Ռուսաստանում՝ կալուածատէրերից գնում է այն մեռած գիւղացիներին, որոնք դեռ ևս մատեանների մէջ յիշուած են իբրև կենդանի մարդիկ. այդպիսով նա ուզում է իր մեռած գիւղացիներին կենդանի մարդկանց փոխարէն գըրաւ դնել լօմբարդում և միանգամից մեծ հարստութիւն ձեռք բերել։ Այս գրուածքի I մասը պարունակում է բացասական տիպեր ռուսաց կեանքի իրականութիւնից. իսկ II մասում հեղինակը նկարագրում է դրական, լուրջ ու իդէալական տիպեր, որոնցով նա ուզում էր տալ իր գրուածքին կրթիչ նշանակութիւն։ Սակայն իր գրուածքի II մասով շատ դժգոհ էր Գոգոլը. նա գրում էր, գրում, բայց գործն առաջ չէր գնում։ Այդ պատճառով էլ 1847 թւին հրատարակում է զանազան յօդուածների մի ժողովածու, որի մէջ արտայայտում է իր կրօնական, բարոյախօսական, հասարակական և գրական հայեացքները։ Սակայն այդ գիրքը մատնուում է անյաջողութեան, որովհետև նա չէր համապատասխանում երգիծարան Գոգոլի ընդունակութեան ու գրական շնորհքին։ Գոգոլը վերջին տարիները փոխել էր իր ուղղութիւնն ու հայեացքները, դառել էր պահպանողական ու ընկել էր միստիցիզմի մէջ։ Նա իր վերջին նամակներում գանգատւում է իր հոգեկան ու ֆիզիքական տանջանքների վրայ։ Նրա միակ սփոփիչն էր աղօթքը։ Նա մինչև անգամ 1848 թւի գարնանը գնաց Երուսաղէմ երկրպագելու Յիսուսի շիրմին։ Ռուսաստան վերադառնալուց յետոյ Գոգոլը սկսեց շարունակել իր կիսատ թողած. *Մեռեալ հոգիների* II մասը, բայց նրա ուժերը օրէցօր սպառւում էին և մոայլ տրամադրութիւնը մաշում էր նրա հոգին։ Արդէն վերջացրել էր նա այդ գրուածքը, երբ մի օր մոայլ տրամադրութեան տակ այրեց նրա ձեռագիրը։ Հէնց այդ ժամանակ էր, երբ Գոգոլը վախճանուեց (1852 թւի փետրուարի 21-ին) և թաղուեց Մոսկւայում։

Ե. Փ.

Ա. Շ Ո Ի Ղ Զ Ի Ի Ա. Ն Ի

Թիֆլիսում փետրուարի 24-ին վախճանուեց 64 տարեկան հասակում հայ աշուղի անունն այնքան փայլուն Աշուղ Չիլանին (Սերոբ Լևոնեանց) և ներկայ մարտի մէկին թաղուեց Խօջիվանքի գերեզմանատունը։ Կենսագրութիւնը տպագրուած է Աղբիւրի ապրիլի մէջ։

Բժշկապետ Բ. Նաւասարդեանի նախագահութեամբ կազմած է յանձնաժողով Զիւանու երկերը հրատարակելու համար։ Իսկ զատկից յետոյ Ազգազբարական ընկ. նախաձեռնութեամբ հանգուցեալի որդին՝ Գեղարուեստի խմբագիր պ. Գար. Լևոնեան մի դասախօսութիւն կանէ հայ աշուղների մասին, որին կը մասնակցեն և աշուղներն իրանց նւագով և երգով։ Եւ կամուրջը այդ ուշագրաւ երեկոյթի յաւակացնւելու է Զիւանու երկերի տպագրութեան։

Ա Շ Ո Ւ Ղ Զ Ի Ւ Ա Ն Ո Ւ Ն

(Առաստաւած դագաղը գերեզման իջեցնելիս)

—

Բազմաշխատ եղբայր, բաղդակից ընկեր,
Տեսար քու կեանքում շատ ցաւ ու կըրակ.
Տանջանք հալածանք, բօթաբեր լուրեր
Տեղում էին վրադ ինչպէս տաք գնդակ։

Բայց դիմադրեցիր դու հերոսաբար՝
Ու սիրած գործդ տարար դու առաջ,
Ազգային երգերդ անթիւ, անհամար
Տարածեցիր մեր երկրում ձախ ու աջ։

Տնական հոգսերը ևս մի կողմից
Ազդում էին վրադ, հալում ու մաշում.
Բայց քեզ օգնութիւն չեկաւ ոչոքից.
Դու ճարահատեալ լուծդ էիր քաշում։

Այդ դժւար, փշոտ, նեղ ճանապարհով
Ընթացար առաջ քառասուն տարի,
Քաղցը հնչիւնով, անուշ քնարով
Տւիր հայ ազգին խրատներ բարի։

Դու մեռար, երգերդ անմահ կըմնան.
Աշուղների մէջ չունիս դու նման.
Քանի որ հայը գոյութիւն ունի,
Կըյիշի նա քեզ, Աշուղ Զիւանի։

Աւետ Հազիրի

Փ Ե Ր Դ Ի Ն Ա Ն Դ Բ Է Բ Է Լ

Հրատարակչական գործիչների համաշխարհային Լայպցիգում է ծնւել 1844 թ. նա, որ այսօր սօցիալ-դէմօկրատների պարագլուխն է Գերմանիայում։

Բէբէլը Լայպցիգում հասարակ արհեստաւոր հիւսըն (խարատ) էր։ 1862 թ. նա եռանդուն մասնակցութիւն է ունենում բանւորական շարժման մէջ և 1865 թ. բանւորների մէջ լուսաւորութիւն տարածող Լայպցիգի միութեան նախագահ և գերմ. բանւորական մնայուն կոմիտէի անդամ է ընտրւում։ Լասալեականներին նսեմացնելով և մօռենալով աւելի Մարքսին ու գերմանականներին հակառակ լինելով, յարակցութեան մէջ է մտնում Բէբէլը միջազգայնականների հետ, դատապարտւում պետական դաւաճանութեան մէջ ու երկու տարի բանտ նստում։ 1890 թ. վերջնականապէս Բէբէլը տեղափոխւում է Բերլին և իբրև պատգամաւոր ռայխստագում իր ճարտար ճառերով հմայում ունկընդիրներին, աւելի և աւելի ստւարացնելով իր կուսակցութեան շարքերը։

Բէբէլը շատ աշող ժողովրդականացնում է գիտնական և պատմակ. դրւածքն.։ Գերմ. գիւղացիների պատերազմը, Քրիստոնէութիւն և սօցիալիզմ, Կինը և սօցիալիզմը (որ 25 անգամ հրատարակւել է) և այլն Բէբէլի աշխատութիւն. են։ Մեր ընթերցողները անշուշտ յիշում են Լ. Մարկոսեանի թարգմ. Տարազի մի շարք համարներում տպագրւած Բէբէլի Կնոջ կոչումը։

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԲԷԲԷԼ
Պարլամենտ. պատգ. 40-ամեակի առիթ.

Ներկայ մարտի 5-ին լրացաւ 40 տարին Բէբէլի՝ իբրև հիւս.-գերմ. ռայխստագի պատգամ. արտասանած առաջին ճառի։ Այդ օրը Բէբէլի աթոռը ռայխստագում զարդարւած է եղել կարմիր վարդերով։ Ինքը թէև ներկայ էր նիստին, բայց բժիշկը արգելել էր ճառ խօսել։ Հիւանդ յօբելեարին բոլոր կուսակցութիւնները ջերմ ողջունեցին, յանկանալով նրան կատարեալ առողջութիւն։

ՀԱՄԱՌՈՒԱԿԱՆ ԶՐԱՆՑՔԱՅԻՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Կիրակի, մարտի 18-ին, Թիֆլիսի Աբտիատ. Ընկ. կռնցերտային դահլիճում կայացաւ համառուսական Ջրանցքային IX համագումարի հանդիսաւոր բացումը նախագահութեամբ Թիֆլիսի քաղաքագլուխ իշխան Վ. Ն. Ջերքեզովի։



Իշխան Վ. Ն. Ջերեզով
Թիֆլիսի քաղաքագլուխ և նախագահ IX Համառ. Ջրանցք. համագ.

Հանդիսին ներկայ էին և երկրիս փոխարքան իր ամուսնուհու հետ ու բարձրաստիճան անձինք։

Մաղթանքից յետոյ համագումարի նախագահ իշխան Վ. Ն. Ջերքեզով բացաւ ժողովը, ողջունելով նրա անդամներին։ Ապա կարդացւեցին հեռագիրներ մինիստրներից, զանազան քաղաքներից և ընկերութիւններից։ Համագումարին ներկայ եղող անդամներից մի քանիսը նոյնպէս ողջունեցին IX համառուսական Ջրանցքային համագումարը։

Խօսեց բիւրօի անդամ պ. Ալ. Խատիսեան, ապա ինժեներ Կուրդիանին կարդաց Թիֆլ. Ջրաշխութեան զարգացման պատմ. տեսութիւնը։

Հետևեալ օրւանից սկսեցին համագումարի նիստերը Զուբալովի ժողովրդ. տան սրահում։ Նիստերը տևեցին մինչև ամսոյս 22-ը։

Համագումարի անդամներին Թիֆլիսը պատիւներ արաւ, պատեցրեց քաղաքի շրջակայքը, չըքաշւեց էքստազի բոպէներին դրւատել ռուսական թագի մարգարիտը՝ Կովկասը. ընծայեց իր սիրտը համագումարին եկած անդամներին, նոյնիսկ մի փոքր էքսկրօսիա արաւ նրանց վերաբերմամբ, պաշտօնապէս հրատարակելով նրանց քաղքի կերպարանափոխւելը, քանի որ Քուի Ջրից նրանք անզգուշութիւն ունեցան խմել և այլն, և այլն։

Այս բոլոր կատակները ու զրոյցները անտարակոյս լաւ տպաւորութիւններ կը թողուն մեր հիւրերի վրայ և համագումարը կունենայ բարի ծրագիրներ։ Բայց գժբաղդութիւնն այն է, որ մենք ծրագիրներից դէնը չենք անցնում և մեր քաղաքային խորհուրդը, մանաւանդ վերջին տարիներս, անխնամ է եղել Թողած Թիֆլիսը։

Ճիշտ է, քաղաքային ջրանցքը երկու միլիոն ր. ևկամուտի հետ ունի է համեմատաբար մաքուր ջուր, բայց չէ բարեշինել Թիֆլիսը, չէ պակասացրել նրա անտանելի փոշին, կենցաղը քաղաքացուն չէ թեթևացրել։

Ճիշտ է, Թիֆլիսի սանիտարական վիճակը բարեկարգ է, համաճարակներ չըկան, բայց կայ քաղց և սով։ Զբաւորութիւնն ազգաբնակութեան իր գագաթնակէտին է հասել։

Փառք ընդհ.-հանհանգապետին, որ նա վակել աւաւ Ալէքսանդրեան այգու շուրջը ձրիակերների պատրաստող *սեմիչկա* (արևածաղիկ) վաճառողների վիտրինները։

Քաղաքը մի կողմից չքաւոր տանտէրերից պահանջում էր նրանց տների առաջ մայթերը լայնացնել, իսկ ինքը քաղաքի միակ այգին շրջապատել էր *սեմիչկա* վաճառողներով, որոնց առևտուրը վարժեցնում էր յաճախորդներին պարապութեան։

Մենք կը ցանկանայինք, որ IX համառուսական Ջրանցքային համագումարը խթան լինէր Թիֆլիսին լուրջ ուշադրութիւն դարձնելու մեր տաք հանքային ջրերի վրայ, հէնց այժմեանից նշանակելով մրցանակ ամենակարճ ժամանակավայ ընթացքում ներկայացնելու ծրագիրներ և գումարներ Թիֆլիսը վերածելու համաշխարհային կուրօրտի և բուժարանի։

Թիֆլ. Լրոպակ. քաղաք դարձնելու, հարստացնելու, ազգաբնակութեանը հաստատ գործ ու եկամուտ տալու, համալսարան, ճեմարան ունենալու ամենահաստատ և ճիշտ ադբիւրը Թիֆլիսի հանքային ջրերն են։

ԿԱՂԱԿԱՑԻՏԱԿԱՆ

Դարձեալ Ռուսիան կրեց մի մեծ պարտութիւն։ Եւ այդ անխուսափելի է նրա համար ապագայումն էլ, եթէ չըղդարէ նա իր անփորձ դիպլօմատների և մեծամիտ հայրենասէրների շնորհիւ նեռուել քաոսային քաղաքականութեան մէջ, մինչև շատ որոշ ինքը չըձևակերպէ իր ընդհանուր քաղաքականութեան ծրագիրը։

Պէտք է միշտ նկատի ունենալ, որ Պետերբուրգում խմբագրուող այժմեան շրջաբերական հեռագիրները, որոնցով այնքան առատ մեր օրագիրները սնունդ են տալիս իրանց ընթերցողներին, փաստեր ապատղող նորութիւններ են, մեր դիպլօմատիային սրտի ուզած պերսպեկտիւները։

Եւ մինչդեռ ամենքը սպասում էին թէ այսօր կամ վաղը կըլսեսրարբերի պատերազմը, արդէն մի ամիս առաջ յայտնի էր, որ Սերբիան պիտի հնազանդի Աւստրիային։ Սակայն ինչ ասել է Սերբիայի Աւստրիային հնազանդելը։

Այդ ասել է Գերմանիայի մի նոր յաղթանակ և Ռուսիայի մի նոր պարտութիւն, որ այսօր արդէն տարբարղարար իրականութիւն է։

Ֆեամիլ-փաշայի, Անգլիայի բարեկամի և համախոհի անկումը նոյնպէս մի ուրիշ յաղթանակ է Գերմանիայի համար։

Գալով Պարսկաստանին, նա անշուշտ աւելի հաստատօրէն բարւոքած կըլինէր իր վիճակն ու անձեռնմխելիութիւնը, եթէ փոխանակ աչքակապուկ խաղալու Անգլիայի և Ռուսաստանի հետ, ափաշկարայ չինէր քաղաքական երկու հոսանքներից մէկին՝ Անգլիային կամ Գերմանիային։

Ցենել Անգլիային՝ նշանակում է պահպանել իր ազգայնական անկախութիւնը, զարգանալ բարոյապէս և տնտեսապէս, դիզելով առատ ոսկի և Մեծ Բրիտանիայի համար։

Գերմանիային յենելը՝ կուսակից լինել մի կենսունակ և հզօր պետութեան, որ ազգայնական նւաճումները առևտրական շուկաների նւաճումից չէ ջոկում և բաժանում։

Ռուսիայի թշւառութիւնը նրա մէջն է կայանում, որ փաստօրէն կուսակից և գաշնակից է Անգլիային ու Ֆրանսիային, որոնք իրանց հպատակ այլացեղներին, այլազգիներին տալիս են լիուլի անկախութիւն և ինքնուրոյն բարգաւաճում, չեն ճնշում նրանց, իսկ ինքը Ռուսիան իր հպատակ այլազգիների վերաբերմամբ ունենալով գերմանական քաղաքականութիւն, (այսինքն հպատակ այլազգիներին ճնշել),—հակառակորդ է Գերմանիային։ Սրա մէջն է և քաոսը։

Տ.

Ա.ՐԻԵՍՏԻ ՇՈՒՐՋԸ

—

Երեք տարի սրանից առաջ մենք *Տարազում* մատնացոյց արինք մանուկ Պալչև Ջուխտակահար եղբայրների վրայ։ Սակայն նրանք ժամանակին ուշադրութեան չառնւեցին, այլ այժմս միայն տեղական մամուլը գտնում է, որ այդ երեխաները ոչ միայն տաղանդներ են, այլ և կատարեալ ֆենոմէններ։ Փառք Աստուծոյ, որ գոնէ երեք տարի յետոյ նկատում են...

Թիֆլիսում է այժմս մի երիտասարդ հայուհի, որ ուսուցչութիւն է անում Մեղու ընկ. դպրոցում և Բարեգործ. ընկ. կոնցերտներին էլ մասնակցում։ Այդ օրիորդը Պապայեանի ծննդավայրից, ատրպատանցի է և Պապայեանից ունի մի նամակ 1904 թ. նոյեմբերի 2-ից, որով հանգուցեալ նշանաւոր երգչուհին օրիորդի ձայնը գտնում է արժանի ուշադրութեան և խորհուրդ տալիս նրան լրջօրէն պարապել, ստանալ բարձրագոյն կրթութիւն։

Այս մի նոր Պապայեանը օրիորդ Մարիամ Սօլօվեան-Սոխանկեանն է, որ Ատրպատանի երաժշտ. ուսումնարանում է ստացել իր երաժշտ. սկզբնական կրթութիւնը և սեպտ. 2-ից 1906 թ. նրան տրւած վիկայականի մէջ ասւած է՝ «Ատրպատանի երաժշտ. ուսումնարանի աշակերտուհի Մարիամ Սօլօվեան ունի լաւ ձայն. սովորել է երկու տարի գերազանց առաջադիմութիւնով, այնպէս, որ ուսումնարանն ընդունել է օրիորդ Մարիամ Սօլօվեանին երաժշտական ուսումնարանի յատուկ Թոշակաւոր»։

Տալով այս անպաճոյճ տեղեկութիւնը, հրաւիրում ենք գեղեցկի և արւեստի մեր մէջ բարգաւաճման նախանձախնդիր հայուհիներին, Պապայեանի յիշատակը յաւերժացնել կամեցողներին օր. Մարիամ Սոխանկեանին (դրամատիկ-սօպրանօ) փայփայել և աջակից լինել նրան կատարելագործւելու այնպէս, ինչպէս օր. Պապայեանին։

Երգօ